Հայաստանի Հանրապետություն
Ոռոգման Համակարգերի Արդիականացման Ծրագիր (ՈՀԱԾ)

Պայմանագրի Շնորհման Ծանուցում

(Խորհրդատվական ծառայություններ – Ընկերությունների ընտրություն)

Պայմանագիր.	- **"Կոտայք, Գեղարքունիք, Շիրակ, Թալին, Եղեգնաձոր և Սյունիք ՋՕԸ-երի սպասարկման տարածքների ոռոգման համակարգերի վերականգնման նախագծում և հեղինակային հսկողություն" ISMP/CQS/SW–21/002**
Պայմանագիրը շնորհված ընկերություն.	- **«ՀԳՇՆ» ՍՊԸ *(համատեղ «ԳԻԴԵՊԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ի հետ՝ ենթախորհրդատու)***
Հասցե.	- **ՀՀ, ք.Երևան, Կիևյան 16**
Պայմանագրի ստորագրման ամսաթիվ.	- **2021թ. սեպտեմբերի 14**
Գնման/ընտրության մեթոդը.	- **Խորհրդատուների որակի վրա հիմնված ընտրության (CQS)**
Պայմանագրի(երի) արժեք.	- **102,690,000.00 ՀՀԴ ներառյալ ԱԱՀ (92,898,000.00 ՀՀԴ Փուլ-I և Փուլ-II համար; 9,792,000.00 ՀՀԴ՝ Փուլ-III համար)**
Ծառայությունների տևողություն.	- **Փուլ-I և Փուլ-II՝ 6 (վեց) ամիս ծառայությունների մեկնարկից հետո; Փուլ-III՝ 17 (տասնյոթ) ամիս շինարարական աշխատանքների մեկնարկից հետո**

Պայմանագրի շրջանակներ.

Ծառայությունները ներառում են 6 ՋՕԸ-երի սպասարկվող տարածքներում գտնվող 16 ոռոգման օբյեկտների համար, այդ թվում 1 ինքնահոս համակարգի կառուցման և 15 երկրորդ կարգի ջրանցքներ վերականգնման աշխատանքների Մանրամասն նախագծային փաթեթի պատրաստում, յուրաքանչյուր ոռոգման օբյեկտի համար կատարել տնտեսական վերլուծություններ և Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության (ՇՄՍԱԳ) հաշվետվության, այդ թվում Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի (ԲՍԿՊ) կամ առանձին ԲՍԿՊ-ի, Վերաբնակեցման գործողությունների պլանի (ՎԳՊ) կամ հակիրճ ՎԳՊ-ի մշակում, եթե կիրառելի է (ըստ անհրաժեշտության), և շինարարական աշխատանքների հեղինակային վերահսկողություն: Նախագիծը պետք է հիմնված լինի ինժեներաերկրաբանական դաշտային հետազոտությունների, բնապահպանական և սոցիալական ուսումնասիրությունների, ջրատնտեսական հաշվարկների, լաբորատոր փորձարկումների և տնտեսական վերլուծությունների վրա: Ծառայություններն իրականացվելու են երեք փուլերով՝

-Փուլ I. Ծրագրի տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրություն, այդ թվում տեխնիկական հետազոտություններ, Նախնական նախագծի պատրաստում, բնապահպանական և սոցիալական սքրինինգի հաշվետվությունների մշակում և տնտեսական վերլուծություններ: **Փուլ I-ի նախնական տևողությունը 4 ամիս է:**

-Փուլ II. Մանրամասն նախագծային փաթեթ, որը կներառի Մրցութային փաստաթղթերի տեխնիկական բաժինները կազմված՝ Գծագրերից, Տեխնիկական մասնագրերից, Աշխատանքների ծավալների ցուցակներից (ԱԱՑ), Շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման (ՇՄՍԱԳ) հաշվետվությունից, այդ թվում Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի (ԲՍԿՊ) կամ առանձին ԲՍԿՊ և ՎԳՊ (անհրաժեշտության դեպքում)): Փուլ II-ը կմեկնարկի Փուլ I-ի հաջող ավարտից հետո: **Փուլ II-ի նախնական տևողությունը 2 ամիս է**:

-Փուլ III. Հեղինակային վերահսկողություն շինարարական աշխատանքների ժամանակ: Փուլ III-ը կմեկնարկի համապատասխան շինարարական աշխատանքների հետ միասին: **Փուլ III-ի նախնական մեկնարկը սահմանված է 2022թ. հունիսին և շինարարական աշխատանքների մոտավոր տևողությունը 17 ամիս է:**